

շատակութիւնը, բայց եթէ կարեւոր էին ազոնը՝ իբրեւ որոշիչ ու պայման ուտելի անասնոց, ինչ որ անհրաժեշտ էին Հրէից համար եւս (Ղեւտ. ԺԱ, 3-4): Այս կրկին հանգամանք սակայն անբաժան էին անոնց քով, ուր մեր նախնիք նոյնքան խստութեամբ չէին պահանջեր երկուքն ի միասին: Այսպէս խոզն անորոճ եւ անսուրբ ըստ Հրէից (անդ, 7), Հայոց քով ուտելի էր, եւ Եղիշէի կողմանէ թուուած է սուրբ անասնոց կարգին<sup>1</sup> (43). ու մեր նախարարք երէց հետ վարազ ալ կ'որսային (Փրպ. 26): Անոնց ճաշակելի որսերուն մէջ կար եւ ցիւր (անդ) կամ իշափայրիկ (Խոր. 138), զոր կրնանք նոյնպէս ուտելի համարիլ, նկատելով Հայոց մէջ ծանօթ բարսեղեան կանոններն ալ, որ հարկադրուեր են արգելուլ «ուտել զմիս ուղտոյ եւ ցռոջ» (ճՂԱ):

Ընդ հակառակն սովորաբար կը խըտորէին նախնիք զանոնք՝ որ երկու յատկութեանց եւ ոչ մին ունէին: Եղիշէ՝ վարդանանց կողմանէ պաշարուած Սիւնեցւոց համար ըսելով՝ թէ «գեշս եւ գճիս մեռելոտիս առ սովոյն վտանգի ակիտիլ ուտէին» (67), կը ցուցնէ՝ թէ այդ անա-

1. Ոսկերերան նոյնպէս ուտելի կը դնէ զխոզնին (Թղթ. Ա, 96):